

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
 ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
 Հեռ. 56 03 60, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
 FREEDOM OF INFORMATION CENTER NGO
 1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

27.01.2015թ.
 238-ի 1

Արագածոտնի մարզպետ
 պարոն Սարգիս Սահակյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Սահակյան,

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում եմ տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. Նշանակվե՞լ է արդյոք Արագածոտնի մարզպետարանում տեղեկատվության ազատության համար պատասխանատու պաշտոնատար անձ,
2. Եթե այո, ապա ո՞վ՝ անունը, ազգանունը, իր հետ կապի միջոցները,
3. Տեղադրվա՞ծ է արդյոք ՏԱ համար պատասխանատու պաշտոնյատար անձի մասին տեղեկատվությունը մարզպետարանի կայքում (եթե այո, ապա խնդրում եմ նշել հիպերհղումը),
4. Խնդրում եմ տրամադրել այն իրավական ակտի պատճենը, որով նշանակվել է ՏԱ համար պատասխանատու պաշտոնատար անձը:

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում եմ տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Վանխավ շնորհակալ եմ:


ԻԱԿ իրավաբան

Գեորգ Հայրապետյան


ՀՀ Արագածոտնի մարզպետարան
Տեղեկատվության ազատության հարցում
30.01.15
Մուտք N 5/549-15

սգատության կենտրոն ՀԿ
10, Բուզանդի 1/3, 4-րդ հարկի

4151



ՀՀ, ք. Աշտարակ, Հանրապետության 4
ՀՀ Արագածոտնի մարզպետ
պարոն Սարգիս Սահակյանին





30 01 19 69



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

0201 ք. Աշտարակ, Վ.Պետրոսյան 4, Հեռ/ֆաքս (+374 232) 3 22 51
0201 г.Аштарак, В.Петросяна 4, тел /факс (+374 232) 3 22 51
0201 с. Ashtarak, V.Petrosyan 4, tel /fax (+374 232) 3 22 51 e-mail aragatsotn@mta.gov.am

_____ N _____

**Ինֆորմացիայի ազատության կենտրոն ՀԿ
իրավաբան Գևորգ Հայրապետյանին**

Հարգելի Գևորգ Հայրապետյան

Ի պատասխան մարզպետարանում տեղեկատվության ազատության համար պատասխանատու անձի վերաբերյալ հարցման, տեղեկացնում ենք, որ այդ պատասխանատվությունը դրված է ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակականության հետ կապերի բաժնի պետ Սաթենիկ Զորյանի վրա (Էլեկտրոնային փոստի հասցե-aragatsotn.press@mta.gov.am, հեռախոս՝ /+374 232/ 34226):

Մարզպետարանում տեղեկատվության ազատության համար պատասխանատու անձի մասին տեղեկատվությունը տեղադրված է մարզպետարանի aragatsotn.gov.am կայքի **Դիմեք մեզ բաժնում՝** Մարզպետարանի պաշտոնական կայքում տեղադրված տեղեկությունները պարզաբանելու իրավասություն ունեցող անձի կոնտակտային տվյալները ենթաբաժնում:

Ս.ՍԱՀԱԿՅԱՆ